Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2021

«Գարգառ գյուղում խմելու ջրամատակարարման համակարգի և հանրակրթական դպրոցի վերանորոգման դրամաշնորհային ծրագրի» ստորագրման արարողություն

2021թ.-ի դեկտեմբերի 22-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ «Գարգառ գյուղում խմելու ջրամատակարարման համակարգի և միջնակարգ դպրոցի վերանորոգման ծրագրի» 96,957 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն տիկին Նունե Ղազախեցյանի միջև: Արարողությանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ տիկին Ժաննա Անդրեասյանն և ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արամ Գրիգորյանը:

Ծրագրի նպատակն է բարելավել Գարգառ գյուղի միջնակարգ դպրոց հաճախող երեխաների կրթական միջավայրը՝ վերանորոգելով դպրոցը: Ավելին, ծրագիրը հետագայում կնպաստի գյուղացիների կյանքի որակի բարելավմանը՝ վերանորոգելով ջրամատակարարման համակարգը և անվտանգ ջուր մատակարարելով հասարակական կառույցներին, ներառյալ գյուղի դպրոցը: Արդյունքում ծրագրից կօգտվի դպրոցի 170 աշակերտ և 1492 գյուղացի:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Տիկին Ղազախեցյանի ելույթը

Դեսպան Ֆուկուշիման և տիկին Ղազախեցյանը դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելիս

Արարողության հարգարժան մասնակիցները